

լըճին նախագահը պաշտօնագիր մը կը գրէ Բրուսայ ընտանի գետնանին ու Բարիդի Բրուսական գետնանատան առաջին թարգմանին, որով կը մերժէ այն երկու կառավարութեանց Պետրինի գահլըճին գէմ ըրած յանգիմանութիւնը որ իբր թէ կը փափաքէ Բրուսիա որ Վեննայի ժողովքը ուշանայ, հասարակաց վատահումութիւնը չփութած ըլլայ, և թէ նաեւ ինչո՞ւ Վեննայի ժողովքին մասնակից ըլլալը մերժէր է: Ամէն բանէ առաջ, Բրուսիան ջանացած է Աւստրիոյ հետ իրարու միտքը իմանալ թէ Ռուսիոյ գահլըճը որչափ զիջանէիք ունի, համագումար ըլլալով որ վերջը վերջը Ապրիլի 20ին գաշնադրութիւնը ստորագրող տէրութեանց կ'իյնայ Բեդրպուրկի գահլըճին պատասխանին հաւանելու, կամ չհաւանելու: Թէպէտ Բրուսիա Աւստրիոյ հետ ըրած գաշնակցութեանը առեւժն ինքն ալ չորս տէրութեանց ունեցած վախճանը հասնելու կը գիտէր, այսու ամենայնիւ չէ հրաժարած, բոլորովին ազատութեամբ, անկախ ու խորհրդակցութենէն դուրս քննելու իր գաշնակցութեանը հետ վերաբերութիւն ունեցող յիշատակագիրները, և այն վայրէկեանէն որ իր տեսութեամբ արձանագրութեան մը նիւթ գտաւ, իշխանութիւն տուաւ իր պատուիրակացը որ խորհրդակցութեանց իրենք ալ ներկայ ըլլան: Վերջապէս Բրուսիա շատ կը ցաւի որ խնդրոյս մէջ իր տեսութիւնը այսչափ տարբեր է Բարիդի ու Լոնտոնի գահլըճաց տեսութենէն, բայց միշտ երջանիկ կը սեպէ զինքը եթէ իր շահուն համար ունենալու պէտք եղած գիրքը միայն ըլլան իր փափաքանացը՝ մասնակից ըլլալու խաղաղութեան հաստատուելուն համար եղած հասարակաց ջանիցը:

31. Ռուսները Պուրքէշըճէն ելած ըլլալով Կոստանդին Կանդակուզէն իշխանը իբր նախագահ տեսչութեան արտաքին կարգի ժողովոյն՝ երկրին կառավարութիւնը ձեռքը կ'առնու:

ՕԳՈՍՏՈՍ

2. Ռուսները Բրուսէն անդին քաշուիլ կը սկսին:

3. Բրուսիա չըջաբերական պաշտօնագիր մը կը խրկէ իր գերմանական արքունեաց քովի պատուիրակներուն: Վեննայի գահլըճը նախագահից Բրուսիոյ որ Գերմանական տէրութեանց զինուորական պատրաստութիւնները հարկաւոր կը սեպէ թէ ընդհանուր քաղաքական դրից, և թէ Ռուսիոյ ռազմագիտական գործունէութեանը պատճառաւ, և Ապրիլի 20ին գաշնաց գերմանական ժողովէն¹ ընդունելութիւն գտնելով, կը յուսայ (Աւստրիա) որ այս զինուորական պատրաստութիւնն ամենակարճ միջոցի մէջ ի գործ գրուի: Բրուսիոյ թագաւորը աղէկ ըմբռնած է թէ այդ գաշնիցը գերմանական գաշնակցութեան բովանդակութեանը վրայ հասկըցուելով ինչ մեծ ծանրութիւն կ'առնու: Անոր համար թագաւորը մինչև հիմա իր ըրած պատերազմական պատրաստու-

թիւնները կը սեպէ, իբր հետեանք իր անկախ և կամաւոր որոշմանը՝ վասն զի իր վախճանը ուրիշ բան չէ՝ բայց եթէ արգի տնտոյց վիճակին դիմաց Բրուսիոյ պատիւն ու զօրութիւնը ապահովել: Բայց թագաւորը կը փափաքէ որ պատերազմական խնդրոյս այս կտորը որ հասարակաց ժողովոյն տակը կ'իյնայ, առանձին ու ճիշդ քննութեան մը տակը ձգուի: Այս չըջաբերականին հետ են նաեւ Արեւելեան խնդրոյն ամէն յիշատակարանները որպէս զի հասարակաց ժողովոյն ներկայացուի:

5. Տաշկըները Զարիֆ-Մուսագաֆա փաշային հրամանին տակ սասակի գիմադրութենէն վերջը Կովկասու տաշկական սահմաններուն վրայ Զիւրիք-Տէրէ գեղին քով սպարապետի տեղակալ հայկազն Բերուտովի զօրքերէն կը յաղթուին: Տօնըհինգ թիգանթիմ Ռուսաց ձեռքը կ'անցնի:

7. Տաշկըները Հալիմ փաշային հրամանին տակ Պուրքէշըճ կը մտնեն:

7. Կորչաքով Վեննայի արքունեաց քով Ռուսիոյ արտաքին կարգի պատուիրակը կը ծանուցանէ Աւստրիոյ արտաքին գործոց պաշտօնակալ Պուլ Կոմսին ու Վեննայի Բրուսական գետնան Ալվէնզէպըն կոմսին, որ Նիկողայոս կայսրը հրաման խրկեց իր զօրացը որ Իանուբեան գաւառներէն քաշուին:

Կը շարունակուի:

ԳԻՒՏ

Կէնդանախ Գոյադ-Էն-Էն պահպանութիւնը:

Պ. Ըգրաւս-Տուրքէշայմ այս օրերս Էանաձուկ ձկան գլուխ մը ներկայացուց Գաղղիոյ ձեմարանին որ 16 տարիէ ի վեր ջրեղէն բաղադրութեան մը մէջ անապական պահեր է եղեր. այս բաղադրութեան չափն է 14 մաս զինկի ծծմբուտ 10 մաս ջրոյ մէջ լուծել ու յագեցընել:

Ասով որ և իցէ ողնուոր կենդանիք կատարելապէս կը պահպանուին: Այսչափ տարուան մէջ Էանաձուկը այնպէս լաւ ու թարմ մնացեր էր որ գէռ ծովու զով հոսն ալ չէր կորսնցուցած:

Ըգրաւս որպէս զի բաղադրութեան պահպանիչ զօրութեանը վրայ աւելի ապահով կարենայ ըլլալ՝ ձկան գլուխը 16 տարուան մէջ չիջի մը մէջ ազատ օդուն գրաւ. ու իրեք ամիսը մէյնը հեղուկին չգիտցած մտին տեղ նոր կը լեցընէր:

Հիմա Ըգրաւս իր այս կերպով պատրաստած ձուկը կ'ուզէ չորցընել մոմիացընելու համար. ու ինչպէս շատ հաւանական կ'երևայ՝ այս բանին մէջ ալ պիտի յաջողի, որով և կենդանաբանութիւնը մէկ նոր նպաստ մ'ալ պիտի ունենայ այս նորահնար ու գիւրին միջոցով:

1 Գ. Գ. Diète.